թերթը եւայլն : — Իբր վաղեմի արտօնատէր և կարող հրապարակագիր , Յ. Թօլայեան արդարակորով գրիչ մը ունեցած է և զայն շարժած է միշտ ազգ. շահեր պաշտպանելու համար : Վերջին օրերուն , Թէրզեան Կ. Պատր.ի հակասահմանադրական ընթացքին դէմ բողոք բարձած է իր թերթին մէջ և լոյս ընծայած՝ անջատ պրակներ , փոյթ չընելով որ Թէրզեանի կուսակիցներ մէկիկ մէկիկ կ'սկսէին դադրեցունել բաժանորդագրութիւննին , թերթերը ետ դրկելով : — Թօլայեան տպարանի 25 տարուան գրաշարապետն է Յրանչի Ճարեան :

† ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԷՆՖԻԷՃԵԱՆ

139. Սահակ Նիկողոսեան . — Ծնած է Տիարպէքիր : Պոլիս գալուն՝ պահ մը վիմագրութեամբ զբաղած է և 1885 ին Սաղըր խանի մէջ հիմնած տպարան մը՝ զոր յետոյ Ֆինճանճըլար , հուսկ ուրեմն Սիւմպիւլլի խան փոխադրած է և տպած Յ. Փալազաշեանի «Տեղագրութիւն Կ. Պոլսոյ և շրջակայից»ը , «Թուագիտութիւն» Դ. տարի , Տ. Փափազեանի «Հնչակ» գաւեշտաթերթը , Կ. Յ. Փաշայեանի «Մարիա՞ թէ Հայկանոյշ»ը , «Պարտէզ հայ մանկան» 1889 , ժօղ սիկարի թուղթին կեղծը , ևն. : — Պօլսէն Եգիպտոս փախած է Դէպքին տարին , որովհետև յեղափոխական ըլլալուն՝ 101 տարուան դատապարտութիւն կրած էր: — 6 տարիէ ի վեր մեռած է Գահիրէ ուր կ'զբաղէր դարձեալ տպարանական գործերով :

Ս. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

140ա. Օննիկ Բարսեղեան . — Ծնած է 1859 ին Գաղատիա ուր ստացած՝ իր նախն. կրթութիւնը : 13 տարեկանին՝ ընտանեօք գաղթած է Պոլիս և 2 տարի Ոսկերերան եկեղեցւոյ դպրոցը յաճախելէ վերջ , 1874 ին աշակերտած է Պ. Բիրիչճեանի՝ գրաշարութիւն սորվելու համար : Արհեստին լաւ մը կ'ընտելանայ և Ղալաթիա , Բէրչէմպէ Բազար , Սազըր խանի մէջ կը բանայ պզտիկ տպարան մը **1888** ին՝ հրապարակի գործերով զբաղելով : Այդ տպարանը 2 տարի յետոյ կը փոխադրէ ծննդավայր , բայց կուսակալն Ապէտին Բաշա կը հալածէ , որով Բարսեղեան կ'ստիպուի իր գործիքներով դառնալ Պոլիս : 1892 ին Թէրսանէի հրամանատար Հասան Բաշա կը հրաւիրէ զինք՝ վարելու Ծով. նախարարութեան պատկանող 175 զինուորով և 25 սպաներով տպարանը : **Ուստա** Բարսեղեան հոն կը պաշտօնավարէ 5 տարի՝ ամէն յարգանք վայելելով իր շուրջիններէն : Դէպքին տարին հրաժարելով կ'ազատի ստոյգ մահէ մը , և գաղթականական հոսանքին քշուելով՝ ընտանեօք կ'երթայ հաստատուիլ Վառնա ուր անմիջապէս կը հիմնէ ԱՐԵՒԵԼԵԱՆ տպարան մը , և **Պուլկարիոյ մէջ հայերէն առաջին գիրք տպողի** փառքն իրեն կը վիճակի : — «Արեւելեան տպարան» էն լոյս ընծայուած են . — Տիրանին Ֆէնոի , Մանկապարտէզի երգարան , Կատակ (շաբաթաթերթ) , Հուզուզ (տճկ. թերթ) , Տաւրոս (շաբաթաթերթ , 19 թիւ) , Կաղանդչէք , Թորոզմունք, Գաւառական բառգիրք, Ծաւալ (կիսամսեայ , 20 թիւ) , Անձնասպան մեռեալ , Անիծեալ պանդուխտ , Ծովեկառքին ոճիրը , Ոստայնանկներ , Վայրի փարդեր , Վիպաբերը , Գաղտնիք հաւատարմութեան , Խորհրդաւոր դատ մը ,